



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5684

L. v. p. n. S. v. t.

L. v. p. n. S. v. t.

- 1924 -

244

10-75

2705 OCT 2008

244  
P. 75

J. M. THOMPSON

# ՃԵՐՄԱԿ ԾԱՂԻԿԸ



ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻՒՆ  
ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
1924

244  
P. 75

22 APR 2013

3684

## ՃԵՐՄԱԿ ԾԱՂԻԿԸ

Ճ. Մ. ԹՈՄՍԸՆ

Ա. \_\_\_\_\_ Ֆիզիքական մեծ ոյժ և տոկալու ահա-  
 գին կարողութիւն ունէր: Այս երկուքն ալ պէտք  
 էին անոր՝ իր ծանր աշխատութեան մէջ: Շաղախի  
 գործարանի բոլոր իր գործապետներուն ու ընկեր-  
 ներուն հաւատարապէս սիրելի էր և միշտ պատ-  
 րաստ՝ ուրիշներուն օգնութեան փութալ, երբ  
 նեղը մնային: Բարի հայր և ամուսին էր և կրնար  
 իրաւամբ պարծիլ թէ կրեք ուրիշ չարեք չէր ը-  
 րած գիտութեամբ:

Սակայն Աստուծոյ խորհուրդ չկար անոր կեան-  
 քին մէջ: Եկեղեցի երբեք չէր երթար, այլ կիրա-  
 կիները կ'անցընէր գլխաւորապէս իր լրագիրը կար-  
 դարով ու գինետան մէջ իր ընկերներուն հետ շա-  
 դակրատելով:

Անոր դուստրը Փրկութեան Բանակը մտած էր  
 և յաճախ կը խօսէր այն Փրկչին վրայ, որ իրեն ոչ  
 միայն մեղաց թողութիւն, այլ և ուրիշներու հա-  
 մար ապրելու իղձ ու շնորհք տուած էր: Ա. \_\_\_\_\_ կ'ըն-  
 դունէր ինչ որ աղջիկը կ'ըսէր, բայց իր կեանքին  
 ու կենցաղին մէջ փոփոխութեան ուէ պէտք չէր  
 տեսներ: Կը կարծէր թէ ինք իր վիճակին մէջ եր-



03314-67

ջանիկ էր և չէր ուզեր մեղքի ու փրկութեան խնդիրներով զբաղիլ :

Օր մը սակայն գործարանէն տուն բերուեցաւ մեծ ասնջանքի մէջ, և բաւական ժամանակ անցաւ մինչև որ բժիշկը կրցաւ հասկնալ թէ անոր ցաւն ի՞նչ էր : Ի սկզբան կարծուեցաւ թէ անկողնին մէջ հանգիստ ընելով պիտի առողջանայ, բայց որովհետեւ բարւոքման նշան չտեսնուեցաւ, մարդն հիւանդանոց տարուեցաւ : Հոն տեսնուեցաւ թէ հիւանդութիւնը ոչ միայն ծանր է, այլ և անյոյս : Վիրարութեան գործողութենէ մը ետեւ Ա. — տուն վերադարձուեցաւ սա ստուգութեամբ թէ անոր գործն այլեւս լմացած է, թէ և կրնայ դեռ բաւական ապրիլ :

Խեղճ Ա. — շատ ողորկ և անարկած կեանք մը ունեցած էր ցարդ : Բնաւ երբեք միտքէն չէր անցուցած թէ երկար ու ցաւազին հիւանդութեան մը պիտի ենթարկուի : Բայց անա մահացու հիւանդութեան մը ճանկն ինկաւ . և կեանքի իր պարզուկ փիլիսոփայութիւնը փլաւ ցաւազին ու անակնկալ այդ փորձանքին տակ : Դառնութեամբ խօսեցաւ Աստուծոյ վրայ, տարակոյսով ու արհամարհանքով ընդունեցաւ անոր սիրոյն վրայ ըսուածները, և մերժեց մտիկ ընել ապաշխարութեան ու հաւատքի ամէն կոչերու :

Բարեկամուհի մը այց եկաւ անոր, և համբուրութեամբ մտիկ ըրաւ անոր զանդատներուն : Զգաց թէ անկարող է ունէ՛ բան ըսել, որով մարդն օգ-

տուի : Բայց, երբ տուն դարձաւ, շերանոցը երթալով գեղեցիկ ճերմակ ծաղիկ մը գտաւ թաղարի մէջ և նոյն իրիկուն իսկ Ա. — ի զրկեց :

Քիչ յետոյ եկեղեցական մը դնաց հիւանդին քով և Ա. — ի անկողնին մօտ ծաղիկը տեսաւ սեղանի մը վրայ : Որովհետեւ հիւանդին բարկութեան պատճառով շատ քիչ բան պիտի կրնար խօսիլ լոյսի և միջիթարութեան այն պատգամին վրայ զոր բերել եկած էր, հիացման աղաղակով մը սիրուն ճերմակ ծաղիկին քով վազեց :

«Այո,» ըսաւ Ա. —, անմիջապէս պատասխանելով անոր զննատումին, «Օր. Թագուհի զրկեց ինձի մեծ աղնուութեամբ : Այդ պզտիկ գիրքն ալ :» Այցելուն ակնարկ մը նետեց Դուկասու տետարանին վրայ որ սեղանին վրայ էր, և հարցուց, «Կարդացի՞ք քիչ մը :»

«Ոչ,» պատասխանեց Ա. —, «Կարդալու շատ գլուխ չունիմ, բայց այդ ծաղիկը կը դիտեմ, ի՞նչ զմայլելի է :»

Եկեղեցականը խօսեցուց մարդը և խոստովանիլ տուաւ թէ այդ պզտիկ ծաղիկն Աստուծոյ իմաստութիւնը և զօրութիւնը կը յայտնէ և թէ մարդոց անկարելի է անոր նմանը շինել : Այնքան կատարեալ է որ միայն անհուն իմաստութիւնը կարող է ձեւակերպել զայն : Մենք չենք կրնար ըմբռնել թէ ի՞նչպէս ձեւակերպուեցաւ : Նմանապէս Աստուծոյ կարելի էր զմայլելի ու գեղեցիկ բաներ ստեղծել առանց մեր գիտնալուն թէ ի՞նչ-

պէս և ինչո՛ւ Կ'ստեղծէ: Եթէ Ա. — տեսնէր զԱստուած մինչ կը ձեւակերպէ ծաղիկը, հոս հոն կարելով թերեւս անբաղձալի մասեր, պիտի խժըրժէր արդեօք գործողութիւնը՝ չհասկնայուն համար դաշն, թէ համբերութեամբ պիտի սպասէր՝ գիտնալով որ անհուն իմաստութիւնն է գործողը:

Ա. — զգաց այս հարցման և կոչին գորութիւնը և խոստովանեցաւ թէ ինք պիտի վստահէր այսպիսի ծաղիկ մը ձեւակերպել գիտցող իմաստութեան: Եւ երբ պաշտօնեան սկսաւ ցոյց տալ Աստուծոյ ոչ միայն իմաստութիւնը, այլ և Աւետարանով յայտնուած սէրը, Ա. — մտիկ բքաւ ու ազդուեցաւ: Այդ ծաղիկը պարզ ծաղիկ էր, բայց գեղեցիկ: Աւետարանն ալ իր գեղով ու շնորհով ոչ նուազ կատարեալ է պարզուկ ըլլալուն համար: Միայն Աստուած կարող էր այդպիսի Աւետարան մը տալ, վասն զի անհուն է իր սիրով: Լսեցէք անոր սա խօսքը, «Երբ դեռ մեղաւոր էինք, Քրիստոս մեզի համար մեռաւ» Անյոյս էինք մեր մեղաց մէջ և կորստեան դատապարտուած, բայց «Աստուած այնպէս սիրեց աշխարհը, մինչև իր միածին Որդին տուաւ, որպէս զի ամէն ով որ անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ»:

«Ուրեմն կը հաւատաք թէ Աստուած կը սիրէ մեզ,» հարցուց Ա. —:

«Այո, կը սիրէ մեզ և ապացոյց ալ տուաւ: Աստուած իր սէրը զոր մեր վրայ ունէր՝ յայտնեց,

որ երբ դեռ մեղաւոր էինք, Քրիստոս մեզի համար մեռաւ:՝ Եւ իսաչի այդ մահով ջնջեց ձեր մեղքը և անհետացուց, ու հիմա կատարեալ ու ձրի թողութիւն կու տայ, ոչ միայն թողութիւն, այլ և կեանք — կեանք յաւիտենական: Ահա ինչ որ ըրած է Աստուծոյ սէրը: Չէք հաւատար դուք, չէք կրնար վստահիլ այսպիսի սիրոյ:»

Ժամանակ մը ետքը Ա. — վստահեցաւ այդ սիրոյն, հաւատաց թէ բոլոր իր մեղքերը ներուած են Յիսուս Քրիստոսէ, զոր ընդունեցաւ իրրև իր անձնական Փրկիչը, և գտաւ Աստուծոյ խաղաղութիւնը որ ամէն միտքէ վէր է:

Այնուհետև Աստուծոյ իմաստութեան ու սիրոյն վրայ անոր հաւատքը նորեք չստանանեցաւ զրկեթէ երկու տարի տեղոյ իր տառապանքին մէջ: Արագօրէն դարգացաւ Ա. — Տէրօջ ու Փրկչին շնորհքով ու գիտութեամբ, և անոնք որ տեսան համբերութիւնն ու զուարթութիւնը զոր ի յայտ բերուցաւ ի ու յոգնութեան այդ օրերուն մէջ՝ գիտցան թէ ի՛նչ պայծառ, կենդանի իրականութիւն եղաւ Տէր Յիսուս անոր համար:

Մենդեան վերջին Տօնին, երբ դեռ երկրի վրայ էր ինք, սոստիկ նեղութեան և ցաւի դժնդակ ժամերէ ետքը կարգաւ արտասանեց ամբողջ ճիճ Սաղմոսը, մխիթարելու համար, ինչպէս ըսաւ ինք, իր կիսն ու դուստրը: «Ով իմ անձս, օրհնէ Տէրը, և անոր բոլոր բարերարութիւնները մի մոռնար:»

Քանի մը շարաթ յետոյ կարդաց Յարութեան

գլուխը և քանիցս կրկնեց իւրովի, «Ով մահ, ս'ւր է քու խայթոցդ:» Ապա ինկաւ իր բարձին վրայ, և ցաւատանջ այդ ամբոյն զէմքին շողարձակ փայլէն իմացան տեսնողները թէ ուրիշ ու խաւար մը ևս անցաւ իր նեղութենէն՝ դանուելու համար Տէրոջ քով յաւիտեան:

Այս տողերը կարդացողները գիտե՞ն արդեօք այս նոյն Աւետարանը: Անհուն իմաստութեան ու սիրոյ պատգամն է այն, իմաստութեան՝ որ մեր մեղքերուն հետ վարուելու միակ հնարը գառւ, և սիրոյ՝ որ կամաւ ու ձրի ինքզինք պատարագեց, որպէս զի փրկուինք մենք: Ի՞նչ կը պատասխանէք ասոր:



<< Ազգային գրադարան



NL0163015

